ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1950 *Общественные науки*

Թ. Հակոբյան

ԶՈՐՔ ԿԱՄ ԿԱՊԱՆ

Սունյաց և Բաղաց թագավորությունը,[1] *որ կազմավորվել էր Սյունիք նահանգում 10-րդ դարի 70-ական թվականներին, իր գոյությունը պահպանում է մինչև 1170 թիվը։ Նա ավելի ուշ է վերանում, քան Մեծ Հայքում եղած հայկական մյուս բոլոր թագավորությունները (Վասպուրականի, Անի-Շիրակի, Վանանդի կամ Կարսի, Լոռու կամ Կյուրիկյան)։ Այդ պատճառով էլ հայ ժողովրդի այս փոքրիկ հատվածի երկու հարյուր տարվա պատմությունը, որի վերաբերյալ իսպառ բացակայում են ուսումնասիրությունները, հանդիսանում է կարևոր հարցերից մեկը։*

Սյունյաց և Բաղաց թագավորության գոյության երկու դարի ընթացքում տեղի ունեցած քաղաքական բազմաթիվ իրադարձությունների հաջող լուսաբանման համար անհրաժեշտ է ծանոթանալ աշխարհագրական այն միջավայրի հետ, որտեղ տարածվում էր թագավորության տերիտորիան և պատմական այն վայրերի հետ, որոնք այս կամ այն չափով առնչվում են այդ քաղաքական գեպքերին։

Սյունյաց և Բաղաց թագավորության կենտրոնական մասը Զորք գավառն էր։ Այստեղ էին գտնվում նրա մայրաքաղաք Կապանն ու մյուս նշանավոր պատմական վայրերը։

Փոքրիկ Զորք գավառը տարածվում էր Ոխշագետի (Ալիշանի մոտ Կա-

---

[1] *Սյունիքում ստեղծված թագավորությունը տարբեր պատմիչների մոտ տարբեր կերպ է անվանվում. Մատթեոս Ուռհայեցին («Ժամանակագրություն», Վաղարշապատ, 1898 թ., էջ 17, 231) նրա թագավորներին անվանում է «թագաւորն Կապանին»։ Այդ նշանակում է, որ պատմիչին՝ թագավորությունը հայտնի է եղել նրա մայրաքաղաքի՝ Կապանի անունով։ Վարդան վարդապետը չի հիշատակում թագավորության անունը, սակայն նրա անուղղակի ակնարկներից պարզ երևում է, որ նրան նույնպես թագավորությունը հայտնի էր Կապան մայրաքաղաքի անվամբ (տես «Հաւաքումն պատմութեան լուսարանեալ», Վենետիկ, 1862 թ., էջ 103, 128 և այլուր)։ Սյունյաց նախարարական տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, որն ավելի տեղյակ է և ավելի շատ վկայություններ ունի Սյունիքում ստեղծված թագավորության մասին, այն երբեմն անվանում է «Բաղաց», երբեմն էլ՝ «Սիւնեաց», իսկ ամենից հաճախ՝ «Սիւնեաց և Բաղաց» (տես «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս 1910 թ., էջ 301, 303, 308, 322, 337)։*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կապանը մինչև վերջ չի մնացել որպես մայրաքաղաք (նա ավերման է ենթարկվել 1103 թ.), իսկ «Բաղաց» կամ «Սիւնեաց» անուններն էլ առանձին-առանձին վերցրած լրիվ չեն արտահայտում տերիտորիալ այն ամբողջականությունը, որ գրավում էր այդ թագավորությունը (մոտավորապես 10-րդ դարից սկսած «Սյունիք» ասելով հասկացվում էր ոչ թե 7-րդ դարի «Աշխարհացույցի» մեջ նկարագրված Սյունիք նահանգը, այլ նրա գավառներից միայն մեկը՝ Ծղուկքը, որի հետ հավանարար միացած էր նաև նրա արևելյան հարևան գավառը՝ Հարանդը։ Նույն ժամանակներում «Բաղաց աշխարհ»-ն իր մեջ ընգրկում էր նախկին Սյունիքի միայն Զորք, Բաղք, կովսական գավառները, հավանաբար և Արևիքը), ուստի մենք ամենից ճիշտ ենք համարել 970-ական թվականներին Սյունիքում կազմավորված թագավորությունը կոչել «Սյունյաց և Բաղաց»։

պան անվանված)[1] և իր ձախակողմյան վտակ Գեղվագետի ու նրանց բազմաթիվ ճյուղավորումների ավազաններում։ Գավառիս անունն էլ, հավանաբար, հենց առաջացել է այն բազմաթիվ ձորերից, որոնք կտրելով Մեղրի և Բարկուշատ լեռնաշղթաների լանջերը, հյուսիսից և հարավից թափվում են Ոխչագետի մեջ։

Զորք գավառը սահմանազատված էր հյուսիսից՝ Ծղուկքով (այժմ Սիսիան), որի հետ բնական սահմանը հանդիսանում էր Բարկուշատ լեռնաշղթայի բարձրադիր կատարները, արևելքից՝ Բաղք և Կովսական գավառներով։ Առաջինի հետ նրա սահմանը կազմում էր Բարկուշատից սկսվող այն լեռնաճյուղը, որը Ոխչագետի ձախ ափին վերջանում է մի քանի հարյուր մետր բարձրության հասնող ուղղաձիգ ժայռով և որին տեղացիներն անվանում են «Սուրուն կապ»։[2] «Կապ»-ից անմիջապես արևելք (1—1,5 կմ) գտնվող Աշաղու գյուղը, որն այժմ էլ գոյություն ունի, մտնում էր Բաղք գավառի մեջ,[3] իսկ նրանից արևմուտք գրեթե նույնքան տարածության վրա Զորք գավառի ամենանշանավոր Բաղաբերդ բերդն էր։

Կովսականի հետ նրա սահմանը կազմում էր այն լեռնաճյուղը, որի արևելյան կողմում գտնվում է Բեխ գյուղը, իսկ նրանից արևմուտք, մոտ հինգ կիլոմետրի վրա գտնվում էր Զորքի մեջ մտնող Վահանա վանքը։

Հարավից Զորքին հարևան էր Արևիք (այժմ Մեղրի) գավառը՝ բնագիծ ունենալով Արևիքի կամ Կապանի (այժմ Մեղրի) լեռները։ Արևմուտքում Գողթն գավառից սահմանագծվում էր Սյունյաց (այժմ Զանգեզուր) լեռներով։[4]

Զորք գավառը լեռնային Սյունյաց աշխարհի ամենալեռնոտ շրջանն էր. նրա զգալի մասն այժմ էլ ծածկված է խիտ և տեղ-տեղ նույնիսկ կուսական բնույթի անտառներով։ Հավանաբար հնում ամբողջ գավառը ծածկված էր անտառներով՝ ավելի անմատչելի դարձնելով այդ փոքրիկ երկիրը։

Օրբելյանի ապրած ժամանակաշրջանում մայրաքաղաքի անվամբ նա կոչվում էր Կապան գավառ «Տասներորդ՝ Զորք գաւառ, որ ունի զանմատոյց ամուրն Բաղաբերդ, և այժմ կոչի Կապան»։[5]

Տաթևի եպիսկոպոսական աթոռին տրվող հարկի հին ցուցակում Զորքի տակ թվարկված է 16 գյուղ։[6] Սրանց եկեղեցական հարկի չափին նայելիս անմիջապես նկատվում է, որ Զորքը խիստ լեռնային բնույթի լինելու շնորհիվ նրա բնակավայրերը, համեմատած մյուս ավելի հարթավայրային գավառների (Ծղուկք, Հաբանդ, Քաշունիք, Սուրք և այլն) բնակավայրերի հետ, փոքր են եղել։[7]

Զորքում եղած բնակավայրերի անունների մեծ մասը չի պահպանվել, իսկ պահպանվածներն էլ մեծ մասամբ կրել են զգալի փոփոխություններ։ Բնակավայրերից մինչ այժմ որոշ փոփոխություններով իրենց անունները

---

1 Ղ. Ալիշան - Սիսական, Վենետիկ, 1893 թ., էջ 290։

2 Այս ժայռը ճեղքելով այժմ անց է կացված Ղափան--Քաջարան բարեկարգ խճուղին։

3 Մ. Օրբելյան—Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910 թ., էջ 518։

4 Ղ. Ալիշան - Սիսական, Վենետիկ, 1893 թ., էջ 290։

5 Մ. Օրբելյան Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 12։

6 Մ. Օրբելյան - Պատմութիւն նահանգին Սիսական էջ 521։

7 Եկեղեցական հարկացուցակը (տես Օրբելյան, Պատմ. նահ. Սիսական, էջ 509 – 523)։

պահպանել են՝ Գեղին (այժմ նույնպես՝ Գեղի), Աջաբաջ (այժմ՝ Աջրաջ), Կահուրդ կամ Գահուրան։ Վերջինը, Ալիշանի կարծիքով, համապատասխանում է այժմյան Քյուրուտին,[1] որը գտնվում է Գեղուց 15 կմ. հյուսիս։ Բացի հիշվածներից, կան ևս երկու բնակավայրեր, որոնց անունները հիշեցնում են հինը, բայց Ալիշանի կողմից նկատի չեն առնված։ Դրանք են՝ «Ոչեթի»-ն. սա ամենայն հավանականությամբ համապատասխանում է այժմյան Ղափանի մեջ մտնող Գեղվա ենթաշրջանի Հաշաթի գյուղին, որը գտնվում է ոչ հեռու Օխչի և Գեղի գետերի խառնարանից։ Մյուսը «Կիցք» կամ «Կից» բնակավայրն է։ Սա հիշատակված է նաև 18-րդ դարին վերաբերող Տաթևի պտղի ցուցակում («Քէօթուկ»-ում)՝ Գեղվածորի գավառի տակ։ Այդ գյուղը, անկասկած, համապատասխանում է այժմյան Գեղվա ենթաշրջանի Քյուրութ գյուղից ոչ հեռու գտնվող Քիրս կամ Քիս գյուղին, որովհետև թուրքերենում «կ»-ն փոխվում է «ղ»-ի կամ «ք»-ի, իսկ «ց»-ն՝ «ս»-ի, ուստի «Կից» հին գյուղի անունը դարձել է «Քիս»։ Դրա համար կարող է փաստ ծառայել նաև այն հանգամանքը, որ այդ գյուղում նշմարվում են հին եկեղեցու ավերակները։

Սահմանափակվելով Զորք գավառի մասին այսքան համառոտակի ծանոթագրությամբ, այժմ մի քիչ ավելի մոտիկից ծանոթանանք նրա տերիտորիայում եղած նշանավոր պատմա-աշխարհագրական վայրերին։

Ա) Գեղի— եկեղեցական հարկի հին ցուցակում անվանված է «Գեղոյ վանք» ձևով։[3] Հարկացուցակի մեջ Զորք գավառի տակ թվարկված 16 բնակավայրերի մեջ ամենից մեծ հարկը տալիս էր «Գեղոյ վանք»ը (20)։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ Զորքի բնակավայրերից ամենամեծը (չհաշված Կապան քաղաքը, որը հարկացուցակում չի հիշատակված) Գեղին էր։

Գեղին գտնվում է նույնանուն գետի միջին հոսանքի շրջանում՝ նրա աջ ափին։ Թագավորության օրոք հավանաբար հանդիսացել է բերդ կամ ամրոց, որովհետև Վարդան վարդապետը այն թվարկում է Կաքավաբերդ, Շլորուտ և թագավորության տերիտորիայում գտնվող այլ բերդերի շարքում՝ բոլորին համարելով Կապանի դղյակներ։[4]

Բաֆֆու մոտ, ինչպես նկատում է Ալիշանը,[5] Գեղին շփոթված է 18-րդ դարի ազատագրական պատերազմների ժամանակներում Ասլամազ-Ղուլիխանի ձեռքին գտնվող Զեվու բերդի հետ։ Բաֆֆին գրում է.

«Զեվու կոչվում է Զեյվա. այդ բերդը պետք չէ շփոթել այն Զեյվա ամրոցի հետ, որ գտնվում է Ղաբաբաղի Գյուլիստան կոչված մահալում, Ղարաչինար կամ Աղջաղալա գյուղի մոտ և ոչ շփոթելու է Բարգյուշատի վիճակի Մուղանջիկ կոչված մասի Զեյվայի հետ։ Մեր նկարագրած Զեվուն հայտնի է և Սյունյաց պատմության մեջ Գեղի անունով, որը Բաղաց իշխանների բերդն էր, գտնվում է Ղափանում»։[6]

---

1 «Սիսական», էջ 292։

2 Ստ. Օրբելյան, ժամանակագրութիւն։ Երևան, 1942 թ. հավելված էջ 41։

3 Օրբելյան—Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 521։

4 «Պատմութիւն տիեզերական» Մոսկվա 1861 թ., էջ 168 «Ի սոյն ժամանակի առան և մնացեալ դղեակք Կապանին յայլազգիս՝ Գրհամ և Գեղի և Կաքավաբերդ (Կաքավաբերդ Թ. Հ.) վասն սաստակեալ մեղաց մերոց»։

5. Սիսական, էջ 292։

6 Բաֆֆի—Դավիթ բեկ, Երևան, 1941 թ., էջ 280։

Ինչպես տեսնում ենք, մեծ վիպասանը չնայած իր «Դավիթ բեկ» պատմական վեպը գրել է Ղափանի շրջանին տեղում լավ ծանոթանալուց հետո միայն, այնուամենայնիվ,—երևի տեղացիների ոչ ճիշտ ցուցմունքների պատճառով,— Զեվու բերդը շփոթել է նրանից 14—15 կմ. հեռու գտնվող Գեղի գյուղի հետ։ Զեվու բերդի ավերակները[1] գտնվում են Քիչու և Գեղի գետերի խառնարանում։ Մինչդեռ Գեղին, ինչպես տեսանք, գտնվում է Գեղվա գետի միջին հոսանքի շրջանում։

Այժմ հազիվ միայն նշմարվում են Գեղի բերդի ավերակները։ Համեմատաբար ավելի լավ է պահպանվել վանքը։ Վերջինս փլված է, իսկ նրա շուրջը եղած պարիսպը գտնվում է կիսախարխուլ վիճակում։ Թե՛ վանքի և թե՛ նրանից ոչ հեռու գտնվող գերեզմանոցի քարերի վրա արձանագրությունների հետքեր չեն նկատվում։

Բ) Շլորուտ բերդ— Օրբելյանն իր պատմության «Գ» գլխում թվարկում է Սյունյաց աշխարհի բոլոր գլխավոր բերդերը, որոնց թվում նաև Շլորուտը։ Նրա կատարած թվարկումը չունի որոշակի հաջորդականություն և հնարավորություն չի տալիս Շլորուտ բերդի աշխարհագրական դիրքը որոշել։ Սակայն այդ հարցի լուծման համար որոշ դյուրություն է ստեղծում նույն պատմիչի մի ուրիշ վկայությունը,- որտեղ նա հիշատակում է այն բերդերը, որոնք Կապանի ավերումից հետո (1103 թ.) մնացել են Գրիգոր թագավորի ձեռքին։ Նրանց թվարկությունը կատարված է հետևյալ հաջորդականությամբ՝

Բաղաբերդ, Գեղի, Կաքավաբերդ, Շլորուտ, Կարճևան, Մեղրի և Գրհամ։[3] Դժվար չէ տեսնել, որ հիշատակված բերդերը գտնվում էին Զորք, Արևիք և Կովսական գավառներում։ Դրանցից Բաղաբերդը և Գեղին գտնվում էին Զորք գավառում, Կաքավաբերդը, Կարճևանը և Մեղրին՝ Արևիքում, իսկ Գրհամը՝ Կովսականում։ Ինչպես այս, այնպես էլ էջ 13-ում կատարած հիշատակության մեջ Օրբելյանը Շլորուտ և Կաքավաբերդ բերդերը թվարկում է իրար մոտ։ Հենց այս հանգամանքն էլ հաշվի առնելով՝ Ալիշանը ենթադրում էր, որ Շլորուտ բերդը պետք է գտնվի Արևիք գավառում։

«Մի յամուր տեղեաց թագաւորութեան Բաղաց էր բերդն այլն Կաքաւոց, թերեւս և նոյն որ կոչի Կքերերդն, և ընդ ամրագոյնս աշխարհին Սիւնեաց դասի ի պատմչեն ի սկիզբն պատմութեանն, այլ Արեւեաց երեւի պատշաճել. նոյնպէս և յերկոսին ևս տեղիս պատմութեանն յիշեալն ընդ նմին՝ Շլորուտ ամուր բերդ»։[4]

Մենք ևս այն համոզմանն էինք, որ Շլորուտ բերդի ավերակները պետք է որոնել Արևիքում (Մեղրու շրջան)։ Եվ այդ, ինչպես և մեր դիսերտացիոն թեմայի («Սյունյաց և Բաղաց թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով») մի շարք այլ հարցերի պարզաբանման համար, անհրաժեշտ դտանք մյուս շրջանների (Ղափան, Գորիս, Սիսիան) հետ միասին ավելի մոտիկից ծանոթանալ Մեղրու շրջանում երբեմնի եղած պատմական վայրերին։ Սակայն Շլորուտ բերդի ավերակները հայտնաբերելու համար Մեղրու շրջանում 1946 թվին կատարած մեր որոնումները արդյունք չտվեցին։

---

[1] Այս բերդից միայն մնացել է Ոսչագեսին գուգահեռ գնացող պարիսպի մի փոքր մասը։

[2] «Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 13։

[3] Նույն տեղում, էջ 335։

[4] Ղ. Ալիշան—Սիսական, էջ 207։

Այժմյան Մեղրու շրջանի Տաշտուն և Լիչք գյուղերի մոտ տեղացիները ցույց տվեցին մի վայր, որն անվանում են «Շլորուտ»։ Այս «Շլորուտ»-ն իրենից ներկայացնում է մի փոքրիկ տարածություն՝ պատած սալորենիներով։ Պարզվեց, որ տեղացիներն այդ վայրը «Շլորուտ» են կոչում միայն այն պատճառով, որ այնտեղ տարածված են սալորենիները (տեղական բարբառով՝ շլորի)։ Այնտեղ հնության որևէ հետք չի նշմարվում։ Մեղրու շրջանի մյուս մասերում, որքանով մենք տեղյակ ենք, այլ «Շլորուտ» չկա։

Մեր ուսումնասիրությունը հնարավորին չափով լիակատար լինելու համար ուշք դարձրինք նաև Զորք գավառի Արևիքին շփվող մասերի վրա։ Այստեղ կան երկու վայրեր, որոնք նույնպես կոչվում են «Շլորուտ»։ Նրանցից մեկը գտնվում է այժմյան Ղափանի շրջանի Ոիչի գյուղից 1,5 կմ. հարավ-արևելք, իսկ մյուսը՝ Վերին Հանդ գյուղից 1 կմ. հյուսիս։ Թե առաջինում և թե երկրորդում կան ավերակներ, բայց տարբեր բնույթի։ Ոիչուց դեպի հարավ-արևելք գտնվող «Շլորուտ»-ում կան մի քանի դաճաճ տների հետքեր, որոնք վկայում են, թե նա եղել է երբեմնի հասարակ բնակավայր։ Այդտեղ պաշտպանական նպատակի կառուցվածքների հետքեր չեն նշմարվում։

Մյուս «Շլորուտ»-ը, որը գտնվում է Վ. Հանդ գյուղից հյուսիս, զբաղեցնում է 3,4 հեկտար տարածություն և ունի իշխող դիրք Ոիչագետի վերնագավառի նկատմամբ։ Նրա գրաված տարածությունը երկար տարիների ընթացքում միշտ ենթարկվել է հերկման։ Այդ պատճառով էլ հնության շատ քիչ հետքեր են հասել մեզ։ Բայց պահպանված հետքերն էլ որոշակի ցույց են տալիս նրա երբեմնի բերդ կամ ամրոց լինելը։ Այստեղ կարելի է տեսնել պարիսպի հետքեր, հին գերեզմանատուն, բազմաթիվ խաչքարեր, շենքերի մնացորդներ և այլն։ Նրա արևելյան և արևմտյան կողմերում ձգվում են երկու լեռնաճյուղեր, որոնց վրա, տեղացիների ավանդության համաձայն, եղել են «տիրքեր» (դիտակետեր)։ «Շլորուտ»-ի միջով է անցնում այն լեռնային ճանապարհը, որ Ոիչագետի վերնագավառը կապում է Գեղվագետի ավազանի հետ։

Նկատի ունենալով դիրքային այդ առավելությունները և պահպանված ավերակների բնույթը, մենք կարծում ենք, որ 10—12-րդ դարերում նշանավոր դարձած Սյունիքի Շլորուտ բերդը համապատասխանում է այժմյան Ղափանի շրջանի Վերին Հանդ գյուղի մոտ գտնվող «Շլորուտ» վայրին։

Գ) Բաղաբերդ— հայագիտական որոշ աշխատություններում՝ հիմք ընդունելով Սյունյաց նախարարական տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մի վկայությունը, Բաղաբերդը նույնացվում է Բաղակի քար ամրոց և վանքի հետ։ Բերենք պատմիչի այդ վկայությունը.

«Իսկ ամուրք անառիկք ի սմա որ ի մարդկան հնարից հեռացեալ են, բայց միայն թէ Տեր մատնեսցէ՝ Բաղաբերդ, որ և մի ոմն ի զարմիցն Սիկայ Բաղակ անուն, առեալ զայս գաւառս ժառանգութեան՝ շինէ զքարն Բաղակու ամրոց, որ կոչի Բաղակի քար. և ամրացուցանէ զբերդն և կոչէ Բաղասակայ Բաղակ անուն, առեալ զայս գաւառս ժառանգութեան՝ շինէ զքարն Բաբերդ. և գաւառն յիւր անուն կոչեցաւ Բաղաց գաւառ»։[1]

[1] Ստ. Օրբելյան—Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 13։ Բաղակի քարի, Բաղաբերդի, Բաղաց գավառի ինչպես և Արևմտյան Հայաստանում գտնվող Բաղեշի (այժմ Բիթլիս), Բալահովտի, Պաղնատան ու այլ տեղանունների առաջացումը կապվում են հնագույն ժամանակներում Հայաստանի տերիտորիայում բնակվող «բաղ»-ի հետ։

Եթե Օրբելյանի հաղորդած տեղեկությունները սահմանափակվեին միայն բերվածով, ապա պարզ է, որ Բաղաբերդն ու Բաղակու քարը պետք է նույնը կարծվեր։ Սակայն պատմիչն ունի մի շարք այլ վկայություններ, որոնց մեջ արդեն որոշակի տարբերություն է դրված Բաղաբերդի և Բաղակու քարի միջև։ Ահա դրանցից մեկը.

«Ի 575 թուականին եկն ամիր Հարոնն և բնաջինջ արար զտուն Կապանին և զԱրևիք գաւառ. և էառ զբերդն Կաքաւու և զքարն Բաղակու որ էր վանք. յորում մթերեալ կայր բազում սրբութիւնք, խաչ և վկայարանք ոսկի և արծաթի և կտակարանք որ գաղթեալ էին ի գաւառացն. և ամենայնն ի գիրութիւն մատնեցան»։[1]

Ինչպես տեսնում ենք Բաղակու քարը վանք էր և գրավվել է 1126 թ., մինչդեռ Բաղաբերդը գրավվել է,— ինչպես քիչ հետո կտեսնենք,— Բաղակու վանքից ավելի քան 40 տարի ուշ և մատենագրական ոչ մի աղբյուրի մեջ այն չի հիշատակվում որպես վանք։ Այդքանն էլ բավական է, որ որոշակի տարբերել Բաղաբերդը Բաղակու վանքից։

Բաղաբերդը Հայաստանի հնագույն բերդերից մեկն է։ Նա իր ամուր դիրքի շնորհիվ, դեռ վաղ ժամանակներից սկսած հռչակված էր որպես անմատչելի բերդ։ 4-րդ դարում պարսից Շապուհ արքայից արքայի բազմաթիվ զորքերի Բաղաբերդը գրավելու համար մի քանի անգամ կատարած հարձակումները ապարդյուն են անցնում։[2]

Նա՝ լինելով Սյունյաց աշխարհի ամենաամուր բերդը,[3] արտաքին վտանգների դեպքում հաճախակի ծառայում էր իբրև ապաստան՝ շրջակայքի բնակիչների համար։

Ավելի մեծ էր Բաղաբերդի նշանակությունը թագավորության օրոք (10—12-րդ դարեր)՝ հատկապես նրա վերջին ժամանակներում, երբ քաղաքական աննպաստ պայմանների պատճառով այդտեղ էր կենտրոնացվել Տաթևի ե երկրում եղած մյուս վանքերի հսկայական հարստություններն ու բազմաթիվ ձեռագրերը։ Օրբելյանը այդ մասին վկայում է.

«... և զի վասն անառիկ ամրութեանն յամենեայն վանորէիցն անդ էին կուտեալ զսրբութիւնս և զգրեանս և զսպաս եկեղեցւոյ. ևս առուել զանհամար և զանման սրբութիւնս և սպաս եկեղեցւոյն Տաթևոյ՝ փարթամ և հարուստ աթոռոյն, խաչ և վկայարանք յոսկւոյ և արծաթոյ և անգին ակամբք և անհուն մարգարտով զարդարեալ, և կտակարանք յոլովք որք թուով ավելի քան զ10.000 զորս ամբարեալ էին անդ»։[4]

Բաղաբերդում կենտրոնացված այդ հարստությունները, ինչպես վկայում է Օրբելյանը, նրա գրավման ժամանակ ավարի է ենթարկվում, իսկ ձեռագիրը ոչնչացվում։[5]

Հաստատապես կարելի է ասել, որ Կապան քաղաքի ավերումից հետո (1103 թ.) թագավորության մայրաքաղաքը դառնում է Բաղաբերդը. դա հենց

1 Ստ. Օրբելյան — Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 335։
2 Նույն տեղում, էջ 28 - 37։
3 Ալիշան, Հայապատում, մասն «Բ», Վենետիկ, 1901 թ., էջ 116։
4 «Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 335 — 336։
5 Նույն տեղում։

երևում է նրանից, որ Սյունյաց նախարարական տան պատմիչը Բաղաբերդի գրավումը հաշվում է թագավորության վերջը։[1]

Թագավորության վերացման մասին Օրբելյանն ունի երկու վկայություն, որոնցից մեկի համաձայն Բաղաբերդի գրավումը, որ համընկնում է թագավորության անկման հետ, տեղի է ունեցել 1170 թվին։[2] Երկրորդ վկայությունից երևում է, որ վերջին թագավորները՝ Սենեքերիմը, ապա նրա որդի Գրիգորն էին և նրանց ժամանակն էլ՝ 1166 թ. (615+551) վերացավ թագավորությունը։[3]

Կոստանյանը՝ հիմք ընդունելով միայն վերջին վկայությունը, Սյունյաց և Բաղաց թագավորության անկման տարին համարում է 1166 թիվը։[4]

Ինչպես տեսնում ենք, թագավորության վերացման մասին Օրբելյանի տված այդ վկայությունների մեջ կա որոշ տարբերություն. ըստ առաջին վկայության թագավորությունը վերացել է 1170 թ., իսկ ըստ երկրորդի՝ 1166 թվին։ Սակայն տարբերությունը բոլորովին վերանում է, երբ մենք ծանոթանում ենք նույն պատմիչի մի ուրիշ վկայության հետ, որը տեղադրված է Բաղաբերդի գրավման մասին եղած հիշատակությունից մի փոքր պարբերության հետ։ Բերենք պատմիչի խոսքերը.

«Բայց Գրիգորն որ իշխէր Բաղաց, ետ ածեալ ի Խաչէնոյ իշխանացն մանուկ մի Հասան անուն ի Գեռաքարեցեացն. և ետ զդուստր իւր Կատայն նմա ի կնութիւն. և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ. և ինքն եւ եղբայր իւր Սմբատ յառաջ քան զառնուլ բերդին մեռանին ի 615 թուին։ Մինչ զբերդն կամէին առնուլ՝ Հասան կացոյց բերդապահս, և ինքն առեալ զկին իւր և զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն (Բաղաբերդից— Թ. Հ.) և անց, գնացի զաւառ իւր և ի տուն ի Խաչէն»։[5]

Հարցն այնքան պարզ է, որ մեկնաբանման շատ քիչ կարիք ունի։ «Ողբ»-ի մեջ եղած հիշատակության համաձայն վերջին թագավորը, ինչպես տեսանք, Գրիգորն էր, որ 1166 թ. սկսած դադարում է թագավորելուց։ Նոր բերված վկայության մեջ ևս ասվում է, թե Գրիգորի թագավորությունը վերջանում է 1166 թ.։ Բայց դրանով չի վերանում Սյունյաց և Բաղաց թագավորությունը, որովհետև, ինչպես վկայության մեջ է ասվում, Գրիգոր թագավորը նախքան հեռանալը, իր թագավորության ժառանգորդ է դարձնում Խաչենի իշխաններից մի մանուկի՝ Հասանին։ Վերջինս 1166 թ., Գրիգորի և նրա եղբայր Սմբատի հեռանալուց հետո, որպես թագավոր իշխում է մինչև թշնամու կողմից Բաղաբերդի վրա կատարած վտանգավոր հարձակումները։

Այսպիսով Սյունյաց և Բաղաց թագավորությունը վերացել է ոչ թե 1166 թ.՝ Գրիգորի թագավորությունից հրաժարվելու պահից, ինչպես Կոստանյանն է կարծում, այլ 1170 թ.՝ Բաղաբերդի գրավմամբ։

1170 թվից հետո Բաղաբերդը, հավանաբար, այլևս որպես բերդ չի ծառայել, որովհետև մատենագրական ոչ մի աղբյուրի մեջ, ինչքանով մեզ հայտնի է, նրա բերդ լինելու մասին չկա հիշատակություն։ Այս տեսակետից չափազանց բնորոշ է այն փաստը, որ 18-րդ դարի ժողովրդական-ազա-

---

1 Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 336։
2 Նույն տեղում, էջ 335—336։
3 Ստ. Օրբելյան, Ողբ, ի ս. Կաթողիկեն, Թիֆլիս, 1883, գլ. ԺԳ, էջ 38։
4 Նույն տեղում, էջ 63, ծանոթ. 34։
5 «Պատմութիւն Նահանգին Սիսական», էջ 336—337։

տագրական պատերազմների ժամանակ նշանավոր դարձած բազմաթիվ հին և նոր բերդերի (Որոտն, Հալիձոր, Զեվու բ. և այլն) շարքում «Դաւիթ բէգ»-ի հեղինակը Բաղաբերդը երբեք չի հիշատակում, ավելի ճիշտ նա բազմաթիվ անգամ տալիս է այդ անունը, բայց ոչ իբրև բերդի, այլ որպես գավառի։

Նույն դարին վերաբերող Տաթևի վանքին տրվող պտղի ցուցակում նախկին Զորք գավառի մի մասը (Ոխշագետի վերնագավառը) կոչված է «Բաղաբերդու գաւառն»։[1] Այդ անունը Ոխշագետի վերնագավառի համար գործածական մնաց նաև հետագա ժամանակներում։

Բաղաբերդը, ինչպես և նրա մոտ գտնվող Բաղակու քարն ու Կապան քաղաքը, ինչքանով մեզ հայտնի է, մինչև այժմ եղած քարտեզների վրա չեն նշանակված։ Ուսումնասիրողները, որոնք օգտվել են գլխավորապես Օրբելյանի և զանազան ճանապարհորդների հիշատակություններից, բավարարվել են նրանց դիրքի մասին չափազանց անորոշ և ընդհանուր նշումներ կատարելով։ Անգամ Ղ. Ալիշանը, որ այնքան մանրամասնությամբ նկարագրել է Սյունիքն իր «Սիսական» աշխատության մեջ, պարզ պատկերացում չունի Բաղաբերդի, նրանից ոչ հեռու գտնվող Բաղակի քարի ու Կապան քաղաքի դիրքի մասին։ Այդ պատճառով էլ նրա «Սիսական» աշխատությանը կցված քարտեզում վերը նշված վայրերն- ընկնում են ոչ թե Զորք կամ Կապան գավառի մեջ, ինչպես իրականում կար, այլ՝ Բաղքի։ Այլ կերպ ասած, Զորք գավառի Բաղքի հետ ունեցած արևելյան սահմանը Բաղաբերդի, Բաղակի քարի, Կապանի և Վահանա վանքի ուղղությամբ 10—12 կմ. արևմուտք է պատկերված, որտեղից դժվար չէ եզրակացնել, որ Ալիշանի համար, իրոք, որոշակի չի եղել նշված վայրերի դիրքը։[2]

Բաղաբերդի ավերակները մինչև այժմ պահպանված են։ Նա գտնվում է Ոխշագետի և նրա ձախակողմյան վտակ Գիրաթաղ գետի անկյունում, այժրմյան Ոխշի գյուղից Ղափան—Քաջարան խճուղու ուղղությամբ 17 կմ. արևելք, Դավիթ Բեկ (Վերին Ջրախոր) գյուղի մոտ, Բարկուշատի լեռնաշղթայից դեպի Ոխշագետի ձախ ափը զառիթափ իջնող լեռնաճյուղերից մեկի վրա։ Այս լեռնաճյուղը ընդհուպ մոտենում է Զավընդուրի լեռնաշղթայից եկող մի ուրիշ լեռնաճյուղի, որից բաժանված է միայն Ոխշագետի՝ 15—20 մետր լայնություն ունեցող կիրճով, որի խորությունը հասնում է 300—350 մետրի։

Բաղաբերդը զետեղված է Ոխշագետի հունից մոտ 300 մետր բարձրություն ունեցող լեռան վրա, որի երեք կողմերում կողք-կողքի շարված են նրա մինչև ութ մետր բարձրություն ունեցող կիսավեր աշտարակները, որոնք իրար հետ միացած են բավականին բարձր, հաստապատ պարսպով։ Բերդի աշտարակները բաժանվում են երկու խմբի. արտաքին, որը գտնվում է լեռան ստորոտին՝ Ոխշի և Գիրաթաղ գետերի ափերին։ Այս խմբի աշտարակները և նրանց իրար հետ միացնող պարիսպը լավ են պահպանված միայն Գիրաթաղ գետի ուղղությամբ։

Ներքին խումբը տեղադրված է արտաքինից 130—150 մետր բարձր՝ լեռնաճյուղի գագաթի վրա։ Այս խմբի աշտարակները և նրանց իրար հետ

---

[1] «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի» հավ. էջ 41։

[2] Դրանց (Բաղաբերդ, Բաղակի քար, Կապան) անուններն Ալիշանի քարտեզում չեն նշված՝ աշխարհագրական դիրքը հեղինակին ճշգրիտ հայտնի չլինելու պատճառով։

[3] «Սիսական»-ին կցված քարտեզը համեմատել սույն աշխատության կցված քարտեզի հետ։

միացնող պարիսպը, բարձր դիրք ունենալու շնորհիվ առաջինից համեմատաբար ավելի լավ են պահպանված։

Պահպանված այդ ավերակները ցույց են տալիս, որ Բաղաբերդն ուներ կրկնակի պարիսպ՝ իրենց աշտարակներով։ Թե՛ աշտարակների և թե՛ պարիսպների պատերը շարված են ամուր կրաշաղախով և տեղ-տեղ նրանց հաստությունը հասնում է 1,2 մետրի։ Եթե դրան գումարենք նրա անմատչելի դիրքը, ապա բոլորովին հասկանալի կդառնա Սյունյաց տան պատմիչի գովեստները Բաղաբերդի անառիկության մասին։

Աշտարակների վրա փորված են 7—8 սմ. տրամագիծ ունեցող անցքեր, որոնք, հավանաբար, ծառայել են որպես դիտանցքներ, կամ թշնամու վրա վառվող հեղուկ թափելու միջոցներ։

Բաղաբերդի տակով անցնում էին երկու ճանապարհներ։ Նրանցից մեկը գալիս էր Բաղք գավառի մասերը կազմող Բարկուշատի և Աճինի կողմերից ու անցնում դեպի Արևիք և Գողթն, իսկ մյուսը հենց սկիզբ էր առնում բերդի տակից և գնում դեպի Տաթև ու ապա միանում Այրարատ—Վայոց Զոր—Ծղուկք—Հաբանդ—Արցախ ճանապարհին։

Բավական հորդաբուխ մի աղբյուր, որն այժմ դուրս է գայտում Ոխշագետի անմիջապես ափին, ժողովրդական զրույցների համաձայն մի ժամանակ գտնվել է բերդի ներսում։ Ժողովրդական այդ զրույցները միանգամայն ստույգ են. ոչ հեռու անցյալում տեղացիների վկայությամբ այդ շրջանում հերկ կատարելու ժամանակ հայտնաբերվել են կավե բազմաթիվ խողովակներ, որոնցով անշուշտ ջուրը տարված է եղել բերդի ներսը։

Տեղացիների մոտ մինչև օրս պահպանվել է Բաղաբերդի[1] հետ կապված մի ավանդություն։ Ըստ այդ ավանդության Բաղաբերդը իբր պարանով կապված էր մի ուրիշ բերդի հետ, որը գտնվում էր նրա դիմաց՝ Ոխշագետի աջ կողմում բարձրացող ժայռի վրա։ Այնտեղ իբր թե գտնվում էր մին հսկայական քարե դուռ, որով փակում էին Ոխշագետի կերճով անցնող ճանապարհը։ Այդ ավանդության մեջ ճիշտն այն է, որ իրոք, Բաղաբերդի դիմաց գտնվող ժայռի վրա ևս գտնվում էր մի բերդ (նրա ավերակներն այժմ էլ գոյություն ունեն) և որ այդ երկու բերդերը, որոնք կանգնած էին Ոխշագետի խոր կիրճի երկու կողմերին, հանդիսանում էին փականք՝ Ոխշագետի ընթացքի ուղղությամբ անցնող ճանապարհի համար։

Թվում է, թե Բաղաբերդում պեղումներ կատարելու դեպքում վատ արդյունքներ չեն տա։

Դ) Բաղակի քար— (վանք և բերդ)— Սրա ավերակները գտնվում են Բաղաբերդի մոտ (որից հեռու է միայն 700—800 մետրով), այժմյան Դավիթ Բեկ (Վերին Ջրախոր) գյուղի տեղում, Ոխշագետի աջ ափին։ Որոշակի երևում են թե՛ բերդի և թե՛ վանքի ավերակները։

Բաղաբերդի նման Բաղակի քար բերդի և վանքի կառուցման ժամանակ ևս, տեղեկություններ չլինելու պատճառով, մեզ համար մնում է անհայտ։ Այդ մասին միայն մի վկայություն ունի Օրբելյանը, որը, սակայն, չափա-

[1] Բաղաբերդը, ինչպես նաև մի քանի հին այլ բերդեր տեղացիներն անվանում են «Դավութ բէգի պերթ» (Դավիթ բեկի բերդ)։ Ժողովուրդը դրանով ցանկացել է երկրում եղած բոլոր բերդերը կապել 18-րդ դարի ժող. ազատագրական պատերազմների հետ։

[2] Օրբելյանի այդ վկայությունը մենք մեջ բերեցինք Բաղաբերդի մասին խոսելիս։

կանց անորոշ է, ունի ավանդության բնույթ[1] և հնարավորություն չի տալիս Բաղաբերդի և Բաղակի քարի կառուցման մոտավոր ժամանակը որոշել։

Բաղակի քարում տեղի ունեցած պատմական իրադարձություններից մեզ հայտնի է միայն 1126 թ. նրա գրավումը ամիր Հարոնի կողմից։ Ստեփանոս Օրբելյանը պատմում է, որ Բաղակի քար վանքում կենտրոնացված հսկայական հարստություններն ավարի ենթարկվեցին սելջուկ զորավար Հարոնի զորքերի կողմից։ Հետագա ժամանակներում Բաղակի քարին վերաբերող տեղեկություններ չկան։

Բաղակի քարի դիրքը բնականից շատ ամուր է։ Նա շրջապատված է կուսական անտառներով ծածկված երեք բարձր ու խիստ զառիվեր լեռներով, իսկ առջևից Ոխշագետի կիրճն է։ Բերդից այժմ մնացել են աշտարակների մնացորդները, որոնք ժամանակի ազդեցության տակ վեր են ածվել գրեթե համասեռ դանգվածների։ Շատերի վրա դուրս են եկել հաստաբուն ծառեր։

Դավիթ Բեկ գյուղում բարձրացող փոքրիկ բլուրի վրա գտնվելիս է եղել Բաղակի վանքը։ Այժմ կիսականգուն վիճակում է գտնվում նրա շուրջը եղած պարիսպը, իսկ փլված վանքի տեղում զետեղված են մի քանի փոքրիկ տներ։ Վանքից ոչ հեռու գտնվում է հին գերեզմանատունը, որի քարերի վրա, սակայն, ոչ մի հիշատակություն չկա։

Ե, Վահանու կամ Վահանա վանք.— Օրբելյանի վկայության համաձայն Վահանու վանքը կառուցվել է Զազիկ իշխանի որդի Վահանի կողմից 911 թ., Սյունյաց գահերեց իշխան Սմբատի, Սմբատ «Ա» Բագրատունի թագավորի և Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի օրոք։ Վանքը կառուցելուց հետո, նրան տալիս են մի հսկայական կալվածք (այժմյան Աչաղու և Շիհարջիկ գյուղերի դիմաց գտնվող ամբողջ տարածությունը)։ Վանքը սպասավորում էին, ինչպես նշված է նույն վկայության մեջ, ավելի քան 100 կրոնավորներ[2]։ Վանքի դիրքի մասին Օրբելյանի տված տեղեկությունները բավականին պարզ ու որոշակի են։ Այդ տեղեկություններից դժվար չէ իմանալ, որ Վահանու վանքը գտնվում էր Աչաղու և Շիհարջիկ գյուղերի դիմաց։[3]

Վահանից հետո վանքի վանահայրը դառնում է նրա եղբորորդի Վահանը։[4] Վերջինս մոտակա տեղից խողովակներով բերում է մի սառնորակ աղբյուր և վանքի առջև կրաշաղախ պատով սարքում այն (այս աղբյուրն այժմ էլ գոյություն ունի)՝ դարձնելով վանքի սեփական աղբյուրը։ Բացի դրանից եկեղեցու առաջ կառուցում է գավիթ, որն ավելի մեծ շուք էր տալիս նրան։[5]

Այս Վահանը, ինչպես երևում է, որպես վանահայր երկար չի մնացել, որովհետև հիշատակությունների համաձայն[6] նա շատ չանցած կարգվում է ամենայն հայոց կաթողիկոս։

Ավելի ուշ ժամանակներում, 11-րդ դարի երկրորդ կիսում, Սյունյաց և

1 Օրբելյանի այդ վկայությունը մենք մեջբերեցինք Բաղաբերդի մասին խոսելիս։

2 Նույն տեղում, էջ 238—240։

3 Նույն տեղում, էջ 338—339։

4 Վարդան պատմիչը (Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861 թ. էջ 121) վանքի կառուցումը վերագրում է այս Վահանին։

5 Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 240։

6 Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885 թ. էջ 181, Կիրակոս Դանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909 թ., էջ 81։

Բաղաց Գրիգոր Թագավորի, Շահանդուխտ Թագուհու, Կատայի և Սենեքերիմ Թագավորի օրոք կատարվում են նոր կառուցումներ։ Այդ մասին Օրբելյանը գրում է.

«Բայց յետ բաղում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ Թագաւորի Բաղաց. ի Շահանդխտոյ Թագուհւոյն և ի Կայտայէ և ի Սենեքերիմայ Թագաւորէ բազում և գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս, և ի վերայ՝ եկեղեցիս և սրահս բազմասիւնս բարձրաբերձ, հովանի և խրախարան իշխանացն...»[1]

Մեծ եկեղեցուց 25 մետր հեռու կառուցված է եղել մի ավելի փոքր եկեղեցի, որի կիսականգուն պատերին նայելիս զգացվում է, որ իր գեղեցկությամբ գերազանցել է մեծին։ Նրա արևելյան պատի ներսի մասում, հիմքին մոտ գտնվող քարերից մեկի վրա մինչև օրս էլ պահպանված է 1086 թ. վերաբերող մի արձանագրություն, որը, սակայն, շատ տեղերում աղճատված լինելու պատճառով մենք չկարողացանք լրիվ վերծանել։ Ուստի նրա տեսքը բերում ենք Ալիշանի «Սիսական» աշխատությունից (էջ 296), չնայած այստեղ ևս կան բավականին անորոշ տեղեր.

«Ի թուին ՇՀԵ. ես Շահանդուխտ դուստր մեծի արքային Աղուանից Թագաւորին և ամուսին Գրիգոր Թագաւորին, որ է որդի Աշոտի կաւասն? ոչ գոլով մեզ ի միասին? ժառանգ ըստ մարնոյ, ես եւ քոյրս իմ Կատայ շինեցաք զՍուրբ Աստուածածինս, փոխարէն գրոց նորա. Որչափ կենդանի եմ կատարեն զսուրբ խորհուրդն. եւ ետ այնորիկ զմեզ կցորդ արասցեն...»[2]

Շահանդուխտի և Կատայի կառուցած այդ եկեղեցին, ինչպես ասացինք, ավերված է. կիսականգուն վիճակում մնում է միայն նրա պատերի մի մասը։

Մեծ եկեղեցին նույնպես փլված է։ Կանգուն վիճակում գտնվում են նրա երեք կամարներն ու գմբեթի մի մասը։ Պատերի արտաքին և ներքին կողմերի սրբատաշ քարերը թափված են. մնացել է միայն նրանց կրաշաղախային զանգվածը, որի վրա աճել են բազմաթիվ մանր ծառեր։

Օրբելյանի հիշատակության համաձայն Վահանու վանքի բակում թաղված են մի շարք իշխաններ, եպիսկոպոսներ և Աղվանից ու Բաղաց թագավորներ, որոնց գերեզմանների վրա եղել են նաև մահարձաններ։

Օրբելյանի հիշատակած մահարձաններից հայտնաբերելու համար մեր կատարած որոնումներն ապարդյուն անցան, որովհետև այն քիչ թվով գերեզմանաքարերը, որոնք գտնվում են գետնի երեսին, իրենց վրա ոչ մի արձանագրություն չեն կրում։

Վահանու վանքի շրջակայքում տարածված են բազմաթիվ շենքերի ավերակներ։ Դրանք, հավանաբար, կրոնավորների խուցերն էին։ Կրոնավորների այդքան մեծ թիվը, որի մասին մենք տեսանք քիչ առաջ, և հսկայական այն քարերի տարածությունը, որ տրված էր վանքին, ցույց են տալիս, որ Վահանու վանքը եղել է միջնադարյան Հայաստանի խոշոր կալվածատերերից մեկը։

Զ) Կապան բաղաք.— Կապան քաղաքի աշխարհագրական դիրքի մասին

[1] Օրբելյան Պատմութ. նահ. Սիսական, էջ 240--241։

[2] Արձանագրությունը գտնվում է 176 սմ երկարություն և 62 սմ լայնություն ունեցող քարի վրա։ Այդ փոքրիկ եկեղեցու պատերի վրա կան քարեր, որոնց երկարությունը հասնում է 285 սմ-ի։

բացակայում են ուղղակի հիշատակությունները։ Մասամբ այդ կարող է լինել պատճառը, որ այն պատմական քարտեզների վրա չի նշանակված։

Սակայն Սյունյաց նախարարական տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանին մեղադրել այն բանի համար, որ Կապանի դիրքի մասին ոչինչ չի հաղորդում, կլինի սխալ, որովհետև նրա մոտ կան այնպիսի տեղեկություններ, որոնք բավականին պարզ կողմնորոշում են տալիս քաղաքի դիրքի մասին, բայց որոնք նկատի չեն առնված ուսումնասիրողների կողմից։ Մեջ բերենք դրանցից թեկուզ մեկը.

«Եւ մեծամեծ և թագաւորական սպասուք զարդարէ զնա. (Վահանու վանքը— Թ. Հ.) և ժողովէ եղբարս սրբակրօնս աւելի քան զ100. և հաստատեն մասն ժառանգութեան եկեղեցւոյն, որ յանուն սուրբ լուսաւորչին Գրիգորի, զձորն գետովն յայս գեհս և յայն յանդաստանս և յայգեստանս վանիցն, և զլեռնակողմն մինչ ի վեր ի ծայր բարձրավանդակին ուր հօրանք հօտիցն լինէին. և բնակետեղ իշխանաց. և ի քաղաքին կողմանէ մինչ ի պատուար պարսպի արտաքին որմոյն որ ի լեռնէն սկսանի...»[1]

Բերված վկայության մեջ պատմիչը նկարագրում է 911 թ. Վահանու վանքին տրված կալվածքների սահմանները։ Այնտեղ ասված էր, որ վանքի կալվածքների սահմանը հասնում էր մինչև քաղաքի պարսպի արտաքին պատը։ Քաղաքը, որի մասին ակնարկված է վկայության մեջ, միայն կարող է լինել Կապանը, որովհետև Զորք գավառում, ուր գտնվում էր Վահանու վանքը, բացի Կապանից ոչ միայն ուրիշ քաղաք չկար, այլև այնտեղ չի հիշատակվում անգամ ավանների և գյուղաքաղաքների գոյության մասին։ Եվ դա բնական է։ Զորքի ունեցած խիստ լեռնային բնույթի պատճառով միջնադարում այնտեղ բացակայում էին խոշոր տիպի բնակավայրերը։

Այստեղից էլ դժվար չէ եզրակացնել, որ Օրբելյանի հիշատակության հիման վրա, Կապան քաղաքի ավերակները պետք է փնտրել Վահանու վանքի մոտակայքում։ Որովհետև վանքի կալվածքները, որոնց սահմանը հասնում էր քաղաքի արտաքին պատին, տարածվում էին նրա շրջակայքում (այժմյան Աղազու և Շիհարջիկ գյուղերի դիմաց)։ Վահանու վանքի ավերակները, ինչպես նրա մասին խոսելիս տեսանք, պահպանվում են և գտնվում են Աշաղու և Շիհարջիկ գյուղերի դիմաց՝ Ոխշագետի աջ կողմին, այժմյան Ղափան քաղաքից մոտ 13 կմ. արևմուտք մի խորը և անտառապատ ձորում, որին տեղացիներն անվանում են «Թամահ քեշի» ձոր։

Եվ իսկապես, Կապան քաղաքի ավերակները գտնվում են Վահանու վանքի արևմտյան կողմում 2—2,5 կմ.-ի վրա, այժմյան Ղափան—Քաջարանշին խճուղու կիսաճանապարհին. Աշաղու գյուղի դիմաց, Ոխշագետի բարձրադիր աջ ափին, որին տեղացիներն անվանում են «Տանձուլենջ»։

Կապան անունը առաջին անգամ հիշատակված է 5-րդ դարի առաջին քառորդին վերաբերող մի պատմության մեջ, որն Օրբելյանի վկայությամբ, ինքը վերցրել է Հովհաննես եկեղեցապանից։[2] Բերենք այդ պատմությունից այն փոքր հատվածը, որի մեջ Կապանը հիշատակվում է.

«Եւ հայր Յովհաննես ի Կապանէն եկն աստ և առեալ զեղբարսն դնայ յկողր գետոյն...»[3]

1 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 230։
Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 81—88։
Նույն տեղում, էջ 87։

Ինչպես տեսնում ենք, սա շափազանց անորոշ վկայություն է։ Այստեղ չի ասված, թե Կապան ասելով, ի՞նչ նկատի ունի.— գավառ, գյուղ, ավան, գյուղաքաղաք, բերդ թե՞ քաղաք։ Սակայն միանգամայն անկասկած կարելի է ընդունել, որ 5-րդ դարում հիշատակված Կապանը ոչ գավառանուն կարող էր լինել, ոչ էլ քաղաք։ Որովհետև Կապանը որպես գավառ գործածական դարձավ 10-րդ դարից հետո միայն, իսկ որպես քաղաք, նա դարձյալ 10-րդ դարից է սկսվում հիշատակվել։ Ուստի մնում է ենթադրել, որ Կապանը այդ ժամանակներում սովորական բնակավայր է եղել։ Հենց դրանով պետք է բացատրել այն, որ 5-րդ դարի վերջին քառորդի հիշատակությունից հետո նրա անունը մինչև 10-րդ դարը ոչ մի մատենագրի կողմից այլևս չի հիշատակվում։

10-րդ դարից սկսած մատենագիրների մոտ Կապանն արդեն հիշատակվում է որպես քաղաք։ Օրբելյանի տված տեղեկություններից երևում է, որ Կապանը նախքան մայրաքաղաք դառնալը հանդիսանում էր Զագիկյան իշխանների ոստան։[1] Նրա հիմնադրման, ինչպես նաև իշխանական ոստան դառնալու ժամանակի վերաբերյալ մեզ ոչ մի տեղեկություն չի հասել։

10-րդ դարի պարսիկ մի անհայտ աշխարհագիր իր «Հուդուդ-ալ-Ալամ» աշխատության մեջ վկայում է, որ իր ժամանակներում Կապանը ծաղկող քաղաք էր։ Նա գրում է.

«Կապան ծաղկող քաղաք, որը արտադրում է լավ որակի շատ բամբակ»։[2]

Եթե Կապանը 10-րդ դարում արդեն ծաղկող քաղաք էր, ինչպես ասում է ժամանակակիցը, ապա կարելի է ենթադրել, որ նա որպես քաղաք ավելի հին պետք է լինի։

Այժմ հարց է առաջանում, թե Կապանը ե՞րբ դարձավ Սյունյաց և Բաղաց թագավորության մայրաքաղաք։

Այս շափազանց հետաքրքրական հարցին պատասխան տալու համար կատարած մեր ուսումնասիրությունները դժբախտաբար սահմանափակվում են հավանական ենթադրությամբ, որովհետև մեզ հասած մատենագրական երկերում, հիշատակություններում և արձանագրությունների մեջ, ինչքանով նրանք մեզ հայտնի են, Կապանի մայրաքաղաք դառնալու թվականի վերաբերյալ տեղեկություններ չկան։

---

1 «Գայծառահայր և յայն աւուրս համագգի սոցին իշխանաց» ի Սիսական տոհմէ Զագիկ՝ մեծ իշխանն, ամենայն բարեպաշտութեամբ. որ ունէր ի բաժնի զԲաղաց գաւառն և զԳապան քաղաք, որ և յետ բագում բարեկարգութեանց վախճանի» (Գատմութիւն նահանգին Սիսական, էջ 200)։ Մի ուրիշ տեղ նույն պատմիչը գրում է.

«Ընդ որում առաջ ելեալ բանագրեալ իշխանն Զևանշէր՝ մեծաւ զգՕմամբ զմեզայ խոստովանէր. նմանապէս և եկեալ գահերէց իշխանն Վասակ՝ որդի Սմբատայ՝ որգւոյ Հաշոտոյ. և նա զեղեցիկ խոստովանութեամբ զմեզայ կարդացեալ՝ ի միասին զԹողութիւն յանցանացն (գոին) և տարեալ մեծապէս չքով հանդուցին յարքունական գահոյս ի Կապան քաղաքի» (անդ, էջ 281)։ Պետք է նկատի ունենալ, որ վերջին հիշատակությունը վերաբերում է 938 թվին, այսինքն երբ դեռ Սյունիքում թագավորություն չէր կազմակերպվել։ Ուրեմն պատմիչի ակնարկած «յարքունական գահոյս ի Կապան քաղաքի»՝ անհրաժեշտ է հասկանալ ոչ թե թագավորական մայրաքաղաք, այլ իշխանական ոստան իմաստով։

2 Hudud al Alam. The necions of the World on persian geography. London, 1837, p. 143։

Առաջադրված հարցի վերաբերյալ Ալիշանը իր միևնույն աշխատության («Սիսական») մեջ արտահայտում է երկու կարծիք.

ա) «Ոչ է քաջայայտ երբ Թագաւորք Սիւնեաց հաստատեցին զաթոռ իւրեանց յամուրս գաւառիս (Զորք գավառում, որում և գտնվում էր Կապանը— Թ. Հ.), փոխադրելով ի կողմանց Ծղկայ և Վայոց ձորոյ. այլ յայտ է զի ի ԺԱ դարու և անդր քան կես ԺԲ-ին աստ նստէին...»։[1]

բ) «Ոստան Տեառց Սիւնեաց ի հնումն էր ի Ծղկաց գաւառի, այլ Վասակեան հարստութիւն հաստատեաց զիւրն ի Վայոց ձոր, երկրորդական զարմին Թողեալ զԾղուկս, որպէս յայտնապէս ասի վասն Մեծին Սմբատայ՝ հօրեղբօր առաջնոյ Թագաւորին Սիւնեաց. իսկ սա Թուի հաստատեալ զաթոռ Թագաւորութեանն ի Կապան քաղաքի Բաղաց, առ անառիկ ամրոցաւն Բաղաբերդի, որոց առանձինն իշխանք տիրէին յԸ—Ժ դարս յոլովք Զագիկ և Զուանշէր անուամբ, որպէս տեսցի յորուն տեղագրի գաւառին»։[2]

Դժվար չէ տեսնել, որ Ալիշանի երկու կարծիքները մեկը մյուսին հակասում են։ Առաջինի մեջ հեղինակն արտահայտում է այն միտքը, թե Թագավորանիստը սկզբում գտնվում էր Ծղուկքի և Վայոց ձորի կողմերում, իսկ հետո այն հաստատվեց Զորքում. և հայտնի չէ, թե երբ տեղի ունեցավ այդ փոխադրումը։ Իսկ երկրորդում՝ հեղինակն այն կարծիքին է, որ Սյունյաց Թագավորների մայրաքաղաքը հենց սկիզբից էլ Կապանն էր՝ վկայակոչելով Օրբելյանի այն հիշատակությունը, ըստ որի նախկին Սյունյաց երկիրը, բացի Գեղամա (Սևանա) լճի շուրջը գտնվող գավառներից, 10-րդ դարում բաժանված էր երկու մասի։ Նրանցից մեկում (Վայոց ձոր և Ճահուկ գավառներում) իշխում էր Սմբատ իշխանը, որը միաժամանակ Սյունյաց տերն էր, իսկ մյուս մասում (Ծղուկք, Բաղք և այլն)՝ նրա եղբայր Սահակը։ Թագավորությունը կազմակերպվեց վերջին ճյուղի (Սահակի սերունդների) տիրության օրոք (առաջին Թագավորը հենց նշված Սահակի որդի Սմբատն էր) ուստի այստեղից էլ Ալիշանը ենթադրում է, որ նրանք Կապան քաղաքը հենց սկզբից դարձրեցին աթոռանիստ։

Եթե հաշվի առնենք պատմիչների միայն ուղղակի վկայությունները, ապա Ալիշանի երկու ենթադրություններից վերջինը (ըստ որի Կապանը սկզբից և ետ Թագավորության մայրաքաղաքն էր), թվում է, թե ավելի հավանական պետք է համարել։ Այդպիսի ուղղակի վկայություններ մեր մատենագիրներից ունեն երեքը՝ Ուռհայեցին, Վարդան վարդապետը և Օրբելյանը։ Ուռհայեցին և Վարդան վարդապետը իրենց հիշատակություններում Սյունյաց և Բաղաց Թագավորությունն անվանում են Կապանի Թագավորություն։[3] Նրանք բացի Կապանից այս Թագավորության համար այլ մայրաքաղաք չեն հիշատակում։

Սյունյաց նախարարական տան պատմիչ Օրբելյանը ևս, որն ավելի գիտակ է այս խնդրում, իր վկայությունների մեջ այս կամ այն առիթով որպես մայրաքաղաք հիշատակում է՝ միայն Կապանը[4] («Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 333, 334 և այլն)։

---

[1] Սիսական, էջ 290։

[2] Նույն տեղում, էջ 17։

[3] «Ժամանակագրութիւն» էջ 80, 231, «Հաւաքումն պատմութեան աթաբեայ...» էջ 103, 128։

[4] Այստեղ նկատի չենք ունենում Կապանի ավերումից հետո (1103 թ.) եղած ժամանակաշրջանը, երբ Թագավորանիստ էր դարձել նրա մոտ գտնվող Բաղաբերդը։

Դրա օգտին կարող է ծառայել նաև այն հանգամանքը, որ Սյունիքում թագավորական շրջանում Կապանից բացի ուրիշ և ոչ մի քաղաք չկար, իսկ թագավորական աթոռը, սովորաբար, հաստատվում էր առաջին հերթին քաղաքում։

Ալիշանի մյուս կարծիքի օգտին (ըստ որի մայրաքաղաքը սկզբում գտնվում էր Ծղուկքի և Վայոց ձորի կողմերում, իսկ հետո այն տեղափոխվեց Կապան քաղաքը) պատմիչների մոտ գրեթե բացակայում են վկայությունները։ Այդպիսի ենթադրության համար առիթ է ծառայել միայն այն հանգամանքը, որ նախքան թագավորության կազմավորվելը, Սյունյաց տերերի ոստանը գտնվում էր Վայոց ձորում, իսկ նույն նախարարական տան իշխան Սահակի և նրանից հետո էլ իր որդու՝ Սմբատի ոստանը Ծղուկք գավառումն էր։ Վերջինը, ինչպես հաղորդում է Օրբելյանը, իր հորեղբոր որդի Վասակի մահից հետո դառնում է ամբողջ Սյունիքի գահերեց իշխանը (տերը)։

«Իսկ Վասակ՝ որդի Սմբատայ, յետ բաղում իշխանութեանց և գովելի գործոց մեռանի. և տիրէր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ որդին Սահակայ, գահերէց իշխանութեամբ»,[1] հետևապես նրա ոստանը պետք է մնար կամ իր հոր բաժնում՝ Ծղուկքում կամ թե տեղափոխվեր Վայոց ձոր, ուր այդ ժամանակներում գտնվում էր Սյունյաց գահերեց իշխանների ոստանը։

Եվ քանի որ Սյունիքում առաջին անգամ հենց այս Սմբատն էր, որ Խորասանի արաբական էմիրից թագ ստանալով իրեն հռչակեց թագավոր,[2] ուստի այստեղից էլ ենթադրվում է, որ թագավորության մայրաքաղաքը սկզբնական շրջանում գտնվում էր Ծղուքկի կամ Վայոց ձորի կողմերում։

Եթե Սյունյաց և Բաղաց թագավորության սկզբնական շրջանում նրա մայրաքաղաքը գտնվելիս լիներ Վայոց ձորի կամ Ծղուկքի կողմերում, ապա այն պետք է փոխադրված լիներ Կապան քաղաքը 989—1000 թ. թ. սահմաններում՝ երբ Գագիկի կողմից գրավվեցին Վայոց ձորը, Ճահուկը, Ծղուկքի հյուսիսային մասն ու Աղահեճք գավառը։

Մեր ձեռքի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ Սյունյաց և Բաղաց թագավորության մայրաքաղաքը Վայոց ձորում երբեք չի եղել։ Ուրեմն մնում է հավանական համարել, որ թագավորության գոյության սկզբնական շրջանում մայրաքաղաքը գտնվում էր Ծղուկք գավառում, իսկ նրա հյուսիսային մասն ու Վայոց ձորը գրավելուց հետո՝ հաշվի առնելով սահմանային լինելը և դիրքային աննպաստ պայմանները, տեղափոխվեց Կապան։

Կապան քաղաքն ուներ դիրքային մի շարք առավելություններ։ Նրա արևմտյան կողմում գտնվող Բաղաբերդ և Բաղակու քար բերդերը ապահովում էին քաղաքի անվտանգությունը արևմտյան (Գողթնի և Երնջակի) և հյուսիսային (Ծղուկքի) կողմերից։ Քաղաքի հյուսիսային կողմով անցնում էր Ոխչակետը, որն այդ մասում առաջացրել է անանցանելի խորը կիրճ՝ խիստ գառիվեր և անտառապատ լանջով, իսկ դիմացը մի քանի հարյուր մետրի հասնող ժայռ է։ Հարավային կողմում ձգվում էին Արևիքի (Մեղրի) բարձրաբերձ և ժայռոտ լեռները, որոնք անմատչելի էին դարձնում քաղաքը հարա-

---

[1] «Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 299։
[2] Նույն տեղում, էջ 299—300։

վային կողմից։ Հենց այդ էր պատճառը, որ կարիք չէր զգացվել քաղաքը հարավային կողմից պարսպափակելու։

«Նախ՝ բազում հետևակազօր մարդիկ սորամուտք և քարագնացք ելին ի գլուխ ապառաժոտ լերինն. ի իջին ընդ մեծ աւարի հեղեղատն ի քաղաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ վասն անհնարին գոլոյ մտից մարդկան...»։[1]

Ուրեմն, այսպես. Կապան քաղաքը հարավային և հյուսիսային կողմերից պատած էր բնական արգելքներով, իսկ արևմտյան կողմից Բաղաբերդ և Բաղակու քար ամուր բերդերով։ Իրոք որ նա «կապան» էր։

Համեմատաբար դյուրին էր քաղաքը մտնել արևելյան կողմից։ Դրա պատճառով էլ նրա արևելյան կողմում, Ստ. Օրբելյանի վկայությամբ, կառուցված էր պարիսպ։[2]

Կապան քաղաքի ավերման մասին տեղեկություններ են հաղորդում Վարդան վարդապետն ու Ստեփանոս Օրբելյանը։ Բերենք նրանց վկայությունները.

ա) «Ի հինգ հարիւր քառասուն և երեք թուին (1094 թ.) առաքեաց

[1] Օրբելյան «Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 334։
[2] Ստ. Օրբելյան—Պատմություն նահանգին Սիսական, էջ 239 և 334։

Փատլուն ամիրայն Գանձակայ զՎասակ Պահլաւ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, ամենայն զօրքն Առանայ, յանառիկ յամուրսն Բաղաց և Կապանին, որ և խարէութեամբ հնարեալ մտին անդր և սպանեալ զՍենեքերիմ. արքայն Հայկազնի, զի թագաւորքն որ անդ՝ հայկականք էին. և ոչ բարձաւ մինչև ի յետին աւուրս եղելոյ երկուց եղբարց անզաւակաց. Սմբատայ և Գրիգորոյ, որ առեալ զմանուկն Սենեքերիմ հայազարմ՝ եդին թագաւոր ժառանգորդ իւրեանց. զոր և սպանեալ հրամանաւ Փատլնոյ՝ շիջաւ ճրագն որ անդ, և տիրեցին Պարսք»։[1]

բ) «Իսկ ի լնուլ մետասան յոբելենին և երկուց թուոց որ է ի 552 թուին (1103 թ.)՝ օր մի յանկարծակի մինչ կային յանհոգութեան քաղաքացիքն, մատնեաց Տէր զանառիկն ի մարգկանէ զԿապան քաղաք և անիծեալ Զորթման վասն քինուն իւր յեղակարծում ժամու հեղաւ ի վերայ քաղաքին..... և իջին ընդ մեծ աւուրի հեղեղատն ի քաղաքն..... և ապա բացին զդուռն քաղաքին որ ի խնձորոյ գլուխ հայէր. և մտին զօրքն ամենայն և հարեալ սատակեցին զամենեսեան առհասարակ. բայց ի բերդն ոչ ինչ կարացին ձեռնարկել. այլ գնացին անդրէն ի տեղի իւրեանց»։[2]

Ինչպես տեսնում ենք, Վարդանի և Օրբելյանի վկայությունների միջև կան զգալի տարբերություններ։ Առաջինի համաձայն Կապանը գրավել է Գանձակի Փատլուն ամիրայի հրամանով՝ Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավը, որը, պատմիչի ասելով, 1094 թվին՝ իւաբեթայությամբ մրտնելով քաղաք սպանում է Սենեքերիմ թագավորին։ Նրա մոտ հաղորդվում է այն մասին, որ, իբր թե 1094 թ. Սենեքերիմ թագավորի սպանությամբ և Կապան քաղաքի գրավմամբ վերանում է Սյունիքի հայկական թագավորությունը։ Քաղաքի բնակիչներին կոտորելու մասին ոչինչ չի ասված։ Իսկ ըստ Օրբելյանի վկայության՝ Կապանը ավերվել է Զորթման ամիրայի կողմից 1103 թ.՝ հանկարծակի հարձակմամբ նա բաց է անում քաղաքի դեպի խնձորի գլուխ նայող[3] դուռը, ամբողջ զորքի հետ միասին մտնում է քաղաք, ավերում այն և ոչնչացնում նրա բնակիչներին։ Օրբելյանի վկայության համաձայն Զորթման չի կարողանում գրավել քաղաքի բերդը և թողնում է ավերված քաղաքն ու իր զորքի հետ միասին հեռանում։

Այս խնդրում մեր կարծիքով նախապատվությունը պետք է տալ Օրբելյանին, որովհետև՝

ա) Նույն Վարդան վարդապետը շատ ավելի ուշ ժամանակներին վերաբերյալ իր մի վկայության մեջ հաղորդում է, որ գրավեցին Կապանի մյուս դղյակները (բերդերը)[4] որոնք դեռ մնացել էին Սյունյաց հայ թագավորների ձեռքին։ Դուրս է գալիս, որ նրա վկայությունն այն մասին, որ իբր 1094 թ. Կապանի գրավմամբ վերացել է Սյունյաց և Բաղաց հայկական թագավորությունը չի համապատասխանում իրականությանը։

բ) Օրբելյանը ոչ միայն առհասարակ Սյունյաց պատմությանը ավելի

---

[1] «Հաւաքումն պատմութեան արարեալ...» Վենետիկ, 1862 թ., էջ 103։

[2] Մ. Օրբելյան, էջ 333–334։

[3] Անվիճելի է, որ քաղաքի նշված դուռը գտնվում էր նրա արևելյան մասում, որովհետև, ինչպես քիչ առաջ տեսանք, նրա միայն արևելյան կողմն էր պարսպապատված։

[4] «Ի սոյն ժամանակի առան և մնացեալ դղեակք Կապանին յայլազգիս՝ Գրհամ և Գեղի և Կաքաւաբերդ վասն սաստկացեալ մեղաց մերոց» («Պատմութիւն տիեզերական» Մոսկվա, 1861 թ., էջ 168)։

գիտակ է, այլև Կապանի ավերման մասին նրա վերը բերված վկայությունը, ինչպես ինքն է ասում, վերցրել է մի ժամանակակցի պատմությունից։ Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Օրբելյանի խոսքերը. «Յամի յորում էր թուականն Հայոց 552 (1103). եղև սկիզբն աւերածոց Կապան գաւառի և ամուր աշխարհին Բաղաց. և սպառելոյ տէրութեան նոցա թագաւորաց և իշխանաց, զոր լուաք և ընթերցաք ի թղթոյն Տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեալ էր ի հոյակապ քաղաքն Անի ի խնդրոյ սուրբ քահանային Մխիթարայ՝ աւագերիցու քաղաքին և փակակալի սուրբ կաթողիկէին»։[1]

Օրբելյանի հիշատակած Ստեփանոս եպիսկոպոսի մատենագրական աշխատությունը մեզ չի հասել, սակայն դա չի արգելակում հավատալու Սյունյաց նախարարական տան պատմիչի վերը բերված այն վկայությանը, ըստ որի Կապան քաղաքը ավերման է ենթարկվել Զորթման ամիրայի կողմից 1103 թ.։

Կապանի ավերումից հետո նրա մասին մինչև 15-րդ դարը այլևս տեղեկություններ չկան։ 1405 թ. վերաբերող իր մի վկայության մեջ Թովմա Մեծոփեցին բազմաթիվ վայրերի հետ հիշատակում է և նրա անունը, գտնելով.

«Եւ երբ մնացեալ աշակերտաց նորա (Վարդանի— Թ. Հ.)՝ թողեալ դնացաք ի գաւառն Սիւնեաց առ մեծն Գրիգոր...։ Եւ նորա ժողովեալ զքառասուն յաշակերտաց իւրոց՝ զՄխիթարն ի Տաթեւոյ. զՅովհաննէսն ի յԵկեղեաց ի վանաց Հերմոնի. զԴալուստն ի Վաղագնու Սիւնեաց սուրբ Կարապետէն. զՍիմէօնն ի Սիւնեաց. զՅակոբն Բոստացի. զԳրիգորն Արարատեան. զԳրիգորն և զՄաթէոսն Ջուղայեցի. զԱւետիսն ի յԱստապատէ. զԵղիայն ի յՈծոփայ. զՅովհաննէսն ի Վաղադնու վանացն. զՈւնան ի Շամախոյ. զՅովհաննէս Կարմիրն ի Կապանայ։ Եւ էին երեք յաշակերտացն այլ տեղիս. Մատէոս Ուխտեցի սուրբ ուխտին Գանձասարու. Մկրտիչն ի Փայտակարանէ. Ստեփաննոս ի Թաւրիզոյ։ Եւ քահանայս բազումս աւելի քան զ60 ոգի, և սկսաւ ուսուցանեալ զգիրս արտաքին իմաստասիրացն»։[2]

Բերված վկայության մեջ ընդամենը հիշատակված է 15 վայր, որոնցից միայն մեկը՝ «Արարատեան» կարելի է կարծել, որ ուներ տերիտորիալ իմաստ (աշխարհ, գավառ, շրջան), իսկ մյուս 14-ը (Տաթև, Հերմոնի վ., Սյունյաց, Վաղագնու վ., Սյունիք վ., Ջուղա, Աստապատ, Բոստ Ոծոփայ վ., Վաղագնու վ., Շամախի, Կապան, Գանձասարի վ., Փայտակարան, Թավրիզ), որոնց թվում և Կապանը վանքեր, բնակավայրեր և քաղաքներ էին։ Ուստի այստեղից կարելի է եզրակացնել, որ Կապանը 1103 թ. ավերումից հետո էլ շարունակում էր գոյություն ունենալ, բայց արդեն ոչ որպես քաղաք, այլ սովորական բնակավայր։ Եթե նա իբրև քաղաք հետագա շրջանում պահպանվեր, ապա Օրբելյանի կողմից անկասկած որևէ առիթով կհիշատակվեր, իսկ այդպիսի առիթներ շատ կային։ Բացի դրանից, այն քաղաք լինելու դեպքում աթոռանիստը Բաղաբերդը չէր լինի։ Միայն մութն էր մնում նրա (Կապանի) անմարդաբնակ դառնալու ժամանակը։ Ըստ երևույթին Կապանը հիմնահատակ ավերվել է 15—16-րդ դարերում՝ թուրքերի ձեռքով։

Կապան անունը հետագայում պահպանվել է (որոշ աղավաղման են-

[1] «Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 332։

[2] «Պատմութիւն Լանկթամուրայ և յաջորդաց իւրոց» Փարիզ, 1860 թ., էջ 50—51։

թարկվելով) Ղափան ձևով,[1] որն արդեն շրջանի, երկրի անուն է և տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր մեծություն։

Կապան քաղաքից այժմ շատ քիչ բան է պահպանված։ Նրա արևելյան կողմի պարսպի հետքերը հազիվ նշմարվում են, իսկ աշտարակներից նկատելի են չորսը, որոնցից մնացել են միայն հիմքերը՝ 1—1,5 մետր բարձրությամբ։ Նույնպիսի աշտարակների հիմքեր կան նաև արևելյան կողմում։

Ավելի աննախանձելի է բուն քաղաքից պահպանված ավերակների վիճակը։ Քաղաքի բռնած տարածության գրեթե կեսը դարերի ընթացքում հերկման ենթարկելու շնորհիվ վեր է ածվել բաց դաշտի, ուր, բացի փոքրիկ բլրի վրա գտնվող մի քանի բոլորովին անշուք գերեզմանաքարերից, ոչինչ չի նշմարվում։ Վաղէմի քաղաքի մյուս կեսը թաղված է խիտ ու անանցանելի անտառի տակ։ Նրա այս մասում, այժմ Մեղրի կոչվող լեռների լանջին, որքանով մենք կարողացանք շրջել, կան բազմաթիվ տների հետքեր։

Շենքերի ավերակներից երևում է, որ Կապանն իր ժամանակաշրջանի համեմատությամբ առաջնակարգ քաղաք չի եղել՝ ոչ ճարտարապետական տեսակետից և ոչ էլ իր մեծությամբ։ Ըստ մեր չափումների Կապանի երկարությունը եղել է մոտ 3 կմ. («Տանձուվինջ»-ի ձորից մինչև Բաղաբերդ), իսկ լայնությունը 300—800 մետր։ Քաղաքի տեղադրավայրը մի եռանկյունի տարածություն է (այդ երևում է նաև նրա չափերից), որի դագաթի մասը ուղղված է դեպի Բաղակու քար և Բաղաբերդ բերդերը։

Քաղաքի ավերակները, գրեթե առանց ընդհատվելու, հասնում են Բաղաբերդ բերդի արտաքին պարսպին։ Ըստ երևույթին Բաղաբերդը Կապանի համար խաղացել է միջնաբերդի դեր և Կապանի ավերման մասին Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկության մեջ ակնարկվող բերդը «... բայց ի բերդն ոչ ինչ կարացին ձեռնարկել. այլ գնացին անդրէն ի տեղի իւրեանց»։[2] հենց Բաղաբերդն է։ Այսպիսով, դուրս է գալիս, որ հակառակ միջնադարյան մյուս քաղաքների միջնաբերդերի, որոնք տեղադրված էին նրանց կենտրոնական մասում, Կապանի միջնաբերդը (Բաղաբերդը) գտնվել է քաղաքի արևմտյան ծայրին։ Ուրիշ կերպ ասած, հնագույն ժամանակներից ի վեր գոյություն ունեցող անմատույց Բաղաբերդի մոտ հետագայում առաջացել է Կապան քաղաքը, որը, սակայն, Բաղաբերդի արևմտյան, հյուսիսային և հարավային կողմերը խիստ ժայռոտ և բնակավայրի համար անպիտանի լինելու պատճառով, ծավալվել է միայն նրա արևելյան մասում։

Т. Акопян

Дзорк или Капан

(Р е з ю м е)

Сюнийское Бахское царство, которое было организовано в 70-х годах X века, существовало до 1170 года.

В течение двухсотлетнего существования этого царства в нем проис-

[1] Ալիշան, Սիսական, էջ 8-9։

[2] Երբեմնի Կապան քաղաքը չպետք է շփոթել այժմյան Ղափան քաղաքի հետ, վերջինս գտնվում է նրա ավերակների վայրից 17—18 կմ հարավ-արևելք։

[3] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 334։

ходили многочисленные политические события. В связи с этим большое значение имеет изучение тех мест, в которых происходили эти события.

Центральным районом Сюнийского царства являлся Дзорк, который назывался также Капаном. Горный и лесистый район Капана по своей территории соответствует западной части нынешнего Кафанского района Армянской ССР.

В Дзоркском уезде находились крепость и монастырь Геги, крепость Шлорут, крепость Бахаберд, крепость и монастырь Бахаки-кар, монастырь Вагана и город Капан.

Геги, расположенный на месте села Геге нынешнего Кафанского района, был крепостью и монастырем. После города Капана он являлся самым большим населенным пунктом этого района. Развалины крепости и монастыря Геги плохо сохранились. Теперь они едва заметны.

Нам удалось выяснить, что крепость Шлорут находилась не в районе Аревик, как предполагал Алишан, а в Дзорке. Эта крепость разрушилась в XII веке. Ее развалины находятся на один километр севернее села Верин Анд нынешнего Кафанского района. На территории, которая была занята крепостью, сохранились следы стен старого кладбища, многочисленные хачкары (камни с изображением креста), остатки зданий и т. д.

Бахаберд—одна из старейших крепостей Армении. Укрепленное месторасположение крепости сделало ее с давних времен недоступной. В период Сюнийского царства, особенно в последний период истории этого царства, в силу неблагополучных политических условий, в крепости Бахаберд были сосредоточены огромные богатства и многочисленные рукописи Татевского и других монастырей страны, по свидетельству историков число рукописей, находившихся в крепости, доходило до 100000).

Начиная с 1103 года, когда был разрушен Капан, столицей царства стал Бахаберд. Бахаберд был завоеван и разрушен сельджуками в 1170 г. После этого он больше не был восстановлен. Развалины Бахаберда находятся на месте слияния рек Вохчи и Гиратах, в 17 километрах (по направлению шоссе Кафан—Каджаранц) к востоку села Вохчи, около села Давид бек, на горе, высота которой достигает 300 метров над уровнем реки Вохчи-гет. В полуразрушенном состоянии находятся внешние и внутренние стены и башни Бахаберда.

В 700—800 метрах от Бахаберда, на месте нынешнего села Давид-бек, находились крепость и монастырь Бахаки-кар. От крепости остались остатки ее башен, которые с течением времени окончательно деформировались. Внутри стен крепости находился монастырь, который, по свидетельству местных жителей сохранился до 1922 г.

Монастырь Вагана был построен в 911 г. После постройки монастыря ему было отдано огромное поместье. Число монахов этого монастыря доходило до 100 человек и больше. Этому монастырю принадлежали две церкви и многочисленные кельи. Развалины монастыря находятся в глубоком обрыве, окруженном лесами, против нынешнего села Шиардисик.

Капан являлся единственным городом Сюника. О географическом расположении города Капана нет никаких прямых свидетельств. Отча-

сти по этой причине город Капан не обозначается на исторических картах. Изучение вопроса, показывает, что г. Капан находился между монастырем Вагана и крепостью Бахак-кар, перед теперешним селом Ачаху, на правом высоком берегу реки Вохчаберд, в 17-ти километрах западнее нынешнего города Капан. До конца 9-го века Капан представлял из себя обыкновенный населенный пункт. Начиная с X века о нем упоминается, как о городе. В конце X века Капан стал столицей царства Сюнийского—Бахского. В 1103 г. он был разрушен сельджуками. Капан не был первостепенным городом ни своей архитектурой, ни величиной. Это был феодальный городок, имеющий неприступное географическое расположение. Сохранилось очень мало развалин Капана. Там, где некогда стоял Капан, теперь едва можно заметить маленькое кладбище, остатки стен, башен и некоторых зданий, которые большей частью покрыты лесом.